ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **«30» «նոյեմբերի» 2018թ.**

ժամը 16 00

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու **(ԳՊ/ԳԱՊ)**	Ս.Գրիգորյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ **(ԳՊ/ԳԱ)**	Ա.Մուրադյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ **(ԳՊ/ԳԱ)**	Գ.Ասատրյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ **(ԳՊ/ԲԱ)**	Ա.Առաքելյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ **(ԳՊ/ԲԱ)**	Մ.Քոչարյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող **(ԳՊ/ՄՀմ)**	Հ.Ավագյան

1. «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Ս.Գրիգորյան)

1.1. «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2018թվականի նոյեմբերի 30-ին, ժամը 16:00-ին, «Զվարթնոց» ԱՕԿ ՓԲ վարչական շենքում, ք.Երևան, օդանավակայան «Զվարթնոց»-2 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2018 թվականի նոյեմբերի 26-ին, ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ «Միկրորինգ» ՍՊ, «Կոմպասս» ՍՊ, «Նորմա-պլյուս» ՍՊ և «Իքս-Արթ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

3. «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին

(Ս.Գրիգորյան)

3.1. 1-ին տեղ զբաղեցրած «Միկրորինգ» ՍՊ, «Կոմպասս» ՍՊ, «Նորմա Պլյուս» ՍՊ և «Իքս-Արթ» ՍՊ ընկերությունների կողմից Հրավերի Հավելված N6-ով նախատեսված գրությունը, առաջարկվող ապրանքների ամբողջ նկարագրերը՝ համաձայն հավելված N6.1-ի՝ էլեկտրոնային ձևով սահմանված ժամկետում ներկայացվել են «Զվարթնոց» ԱՕԿ ՓԲ ընկերության meteo@arminco.com էլեկտրոնային փոստի հասցեին: 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովը որոշեց՝

(Ս.Գրիգորյան)

4.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ մրցույթի 2-րդ և 5-րդ չափաբաժիններով հաղթող ճանաչել ամենացածր գնային առաջարկ ներկայացրած **«Իքս-Արթ» ՍՊԸ-ին.**

4.2. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ մրցույթի 3-րդ և 10-րդ չափաբաժիններով հաղթող ճանաչել ամենացածր գնային առաջարկ ներկայացրած **«Կոմպասս» ՍՊԸ-ին.**

4.3. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ մրցույթի 4-րդ, 8-րդ և 11-րդ չափաբաժիններով հաղթող ճանաչել ամենացածր գնային առաջարկ ներկայացրած **«Նորմա-պլյուս» ՍՊԸ-ին.**

4.4. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ մրցույթի 7-րդ չափաբաժնով հաղթող ճանաչել ամենացածր գնային առաջարկ ներկայացրած **«Միկրորինգ» ՍՊԸ-ին.**

4.5. Պայմանագրի կնքման նպատակով «ՀԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցներին՝ անգործության ժամկետի ավարտից հետո, ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

4.6. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4.7. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմի պատասխանատու
(**ԳՊ/ԳԱՊ**) _____ Ս.Գրիգորյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) _____ Ա.Մուրադյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) _____ Գ.Ասատրյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) _____ Ա.Առաքելյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) _____ Մ.Քոչարյան

Գնման Պատասխանատու/
Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) _____ Հ.Ավագյան